17.09.2025 թ.

«Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» խումբ գործերի վերաբերյալ Նախարարների կոմիտեի որոշումը

Նախարարների կոմիտեն

1. Ընդգծում է, որ այս գործերը վերաբերում են իշխանությունների պոզիտիվ պարտավորությունների չկատարմանը՝ ապահովելու դիմումատուների որդիների կյանքի իրավունքի պաշտպանությունը նրանց զինվորական ծառայության ընթացքում, ինչպես նաև՝ նրանց մահվան դեպքերի անարդյունավետ քննություններին, որոնք տեղի են ունեցել 2001-ից 2012 թվականների ընթացքում:

Անհատական միջոցառումների վերաբերյալ

2. Հաշվի առնելով, որ այլևս հնարավոր չէ ձեռնարկել այլ անհատական միջոցառումներ *Մուրադյան, Անահիտ Մկրտչյան, Աշոտ Մալխասյան, Օհանջանյան, Դիմաքսյան* և *Վարյան* գործերով, Նախարարների կոմիտեն որոշեց համապատասխանաբար փակել այս գործերի վերահսկողությունը և ընդունեց վերջնական բանաձև (CM/ResDH(2025)250):
3. Նախարարների կոմիտեն իշխանություններից ակնկալում է հավելյալ տեղեկատվություն Ա.Կ.-ի նկատմամբ դատավարության արդյունքների և Ն.Գ.-ի նկատմամբ արտահանձնման գործընթացների վերաբերյալ՝ *Նանա Մուրադյան* գործով, ինչպես նաև՝ վերաբացված դատավարությունների ընթացքի մասին՝ *Հովհաննիսյան և Կարապետյան* գործով:

Ընդհանուր միջոցառումների վերաբերյալ

4. Նախարարների կոմիտեն ողջունում է իշխանությունների կողմից իրականացրած լայնածավալ ընդհանուր միջոցառումները՝ ներառյալ օրենսդրական և ինստիտուցիոնալ բարդ բարեփոխումները, ինչպես նաև՝ իշխանությունների հանձնառությունը՝ լուծելու այս գործերում արձանագրված խախտումների խորքային պատճառները Եվրոպայի խորհրդի հետ համատեղ ծրագրերի միջոցով:
5. Նախարարների կոմիտեն նշում է սակայն, որ ոչ մարտական պայմաններում մահերը զինված ուժերում շարունակում են խնդիր հանդիսանալ, ուստի կոմիտեն հորդորում է իշխանություններին շարունակել ջանքերը՝ ուժեղացնելու կանխարգելիչ միջոցները՝ ուղղված վատ վերաբերմունքի, վիրավորանքի և բուլլինգի դեմ պայքարին զինված ուժերում: Անհրաժեշտ է ապահովել անանուն հաղորդման մեխանիզմի պատշաճ գործունեությունը, երաշխավորել

զինծառայողների հոգեբանական աջակցության բավարար տրամադրումը և պատշաճ բժշկական զննությունների իրականացումը զորակոչի ժամանակ, ինչպես նաև՝ ապահովել բոլոր մահերի և բռնության դեպքերի արդյունավետ և ժամանակին քննությունը: Կոմիտեն հորդորում է իշխանություններին ներկայացնել հաշվետվություն՝ հավելյալ ձեռնարկված ընդանուր միջոցառումների և դրանց գործնական ազդեցության վերաբերյալ:

6. Բացի այդ, կոմիտեն հորդորում է իշխանություններին ներկայացնել ձեռնարկված միջոցառումները՝ ուղղված զենքի օգտագործման կանոնների և կարգավորումների պատշաճ կիրառմանը, ինչպես նաև՝ զինված ուժերում շտապ բժշկական օգնության կազմակերպմանն ու տրամադրմանը:
7. Նախարարների կոմիտեն իշխանություններին հորդորում է ներկայացնել հավելյալ տեղեկատվություն, որը հնարավորություն կտա վեր հանել առկա միտումները և գնահատել առաջընթացը: Մասնավորապես, կոմիտեն ակնկալում է իշխանություններից 2024-2026 թվականների համատեքստում ներկայացնել թարմացված և տարանջատված վիճակագրական տվյալներ հետևյալ հարցերի վերաբերյալ.

- ոչ մարտական մահեր, դրանց պատճառները, հարուցված քրեական գործերը և դրանց արդյունքները,
- ինքնախեղման դեպքեր,
- ոչ կանոնադրային հարաբերությունների, վատ վերաբերմունքի, վիրավորանքի կամ բուլլինգի վերաբերյալ բողոքներ, ինչպես նաև նախաձեռնված կարգապահական և քրեական վարույթների քանակը:

8. Քանի որ Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի ենթատեքստում արձանագրված խախտումները վերաբերում էին ներպետական իրավական նորմերի բացակայությանը, որոնք թույլ կտային փոխհատուցում պահանջել հարազատի մահվան հետևանքով կրած ոչ նյութական վնասի համար, կոմիտեն որոշեց փակել այս ասպեկտի վերահսկողությունը *Պողոսյան և Բաղդասարյան* և *Միրզոյան* գործերի շրջանակներում՝ հաշվի առնելով իշխանությունների կողմից իրականացված օրենսդրական բարեփոխումները:
9. Հաշվի առնելով իշխանությունների կողմից ձեռնարկված նշանակալի գործողությունները նման խախտումները կանխելու և լայնածավալ օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործնական միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ, կոմիտեն որոշում է փակել *Մուրադյան* ուղենիշային գործի վերահսկողությունը և շարունակել մնացած միջոցառումների ուսումնասիրությունը *Նանա Մուրադյան* գործերի խմբի շրջանակներում:

10. Կոմիտեն հորդորում է իշխանություններին մինչև 2027 թվականի մարտի 1-ը ներկայացնել թարմացված տեղեկատվություն հավելյալ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ: